



ՀԱՅՐԱՊԵՏ ԱՂԱԶԱՆՅԱՆ ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի ասպիրանտ

ՀՀ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Անցումը շուկայական հարաբերություններին և տնտեսության մասնավոր հատվածի ձևավորումը կազմակերպությունների մեջ մասի համար ստեղծել են լուրջ խնդիրներ՝ ֆինանսական միջոցների կազմավորման և դրանց արդյունավետ օգտագործման առումով։ Կապիտալի օպտիմալ կառուցվածքը պետք է բխի դրանց սեփականատերների և ներդրողների շահերից, ինչը կիսագեցնի կազմակերպությունների ռիսկերի նվազման։ Դա հատկապես առանցքային նշանակություն ունի անցումային տնտեսությամբ երկրներում։ Բացի այդ, կարևոր է հաշվի առնել նաև տվյալ երկրի տնտեսական զարգացման առանձնահատկությունները։ ՀՀ-ում ֆինանսական միջոցների ձեռքբերումը կապված է բազմաթիվ դժվարությունների հաղթահարման հետ, ինչը զգալի ժամանակ է պահանջում։ Դա ամրապնդում է կազմակերպությունների ֆինանսական արդյունքների վրա։

Հիմնարարեր. ներդրումային գործունեություն, ֆինանսական արդյունքներ, ֆինանսական ռիսկի գործակից, պասիվի կառուցվածք, Հ-վիճակագրական վերլուծություն

JEL: C44, E22, G32, O16

Տնտեսության զարգացման հիմքը ռեսուրսների արդյունավետ օգտագործման միջոցով առավելագույն արդյունքի ապահովումն է։ Կազմակերպությունների ֆինանսավորման օպտիմալ աղբյուրների ձևավորումը ժամանակակից կազմակերպությունների առաջնային խնդիրներից է։ Կապիտալի կառուցվածքը բոլոր տեսակի սեփական և փոխառու ռեսուրսների հարաբերակցությունն է, որոնք օգտագործվում են կազմակերպության գործունեության ընթացքում ակտիվների ֆինանսավորման նպատակով¹։ Այս առումով,

¹Տես Ելանք Ի.Ա., Управление финансовыми ресурсами. М., 2011:

կարևոր է << կազմակերպությունների ֆինանսական կառավարման արդյունավետությանն առնչվող առանձնահատկությունների ուսումնասիրությունը և դրա բարելավման ուղղությունների բացահայտումը:

Կազմակերպություններն իրենց տնտեսական գործունեությունն իրականացնում են գործառնական, ներդրումային և ֆինանսական գործունեության շրջանակներում: Այս երեքի միջև առկա է անուղղակի կապվածություն: Կազմակերպությունն իր տնտեսական գործունեության հենց սկզբում ծավալում է ֆինանսական գործունեություն, այն է՝ տնտեսական միջոցների հավաքագրում, որին հաջորդում է դրանց օգտագործման գործընթացը ներդրումային և գործառնությունների սահմաններում: Ֆինանսական արդյունքների հիմնական մասն ապահովում է գործառնական գործունեության շրջանակում: Դրա հությունն այն է, որ կազմակերպությունը յուրաքանչյուր գործառնական շրջափուլից հետո ապահովում է հավելյալ արդյունք շահույթի տեսքով, որը դառնում է կազմակերպության ներքին ֆինանսավորման աղբյուրներից մեկը: Գործունեության մյուս տեսակները հիմնականում շահույթ չապահովում գործառույթներ են, դեռ ավելին՝ այլ հավասար պայմաններում դրանք կազմակերպության համար տնտեսական լրացուցիչ ծախսեր են:

Առաջին հայացքից կազմակերպության ֆինանսական ցուցանիշների մեծ մասի միջև առկա է որոշակի կախվածություն: Սակայն ավելի խորքային և համալիր դիտարկման արդյունքում պարզվում է, որ շատ ցուցանիշներ սերտորեն փոխկապված են: Ֆինանսական արդյունքների տեսանկյունից հաջողակ և անհաջողակ կազմակերպություններն ունեն ֆինանսավորման նմանություններ, որոնց հիմքում հեկավարության կողմից հստակ ֆինանսական քաղաքականություն իրականացնելու գիտակցումն է:

Այսուել կարևոր գործոն է ֆինանսական գործունեություն իրականացնելիս կազմակերպության սեփականատերերի և կառավարիչների միջև տնտեսական շահերի համատեղումը: Առանց հավասարակշռված շահերի համատեղման՝ կազմակերպությունները չեն կարող ունենալ առողջ ներտնտեսական միջավայր, վերահսկողություն, համապատասխան ֆինանսական արդյունքներ ապահովելու շարժարիթ:

Անկախացումից ի վեր << տնտեսական համակարգն աստիճանաբար կերպափոխվում է: << ձեռնարկությունները թեև գործում են ազատ շուկայական հարաբերությունների դաշտում, սակայն, տնտեսական միջոցների ձևավորման աղբյուրների հետ կապված, ունեն առանձնահատկություններ:

Ֆինանսական միջոցների ձևավորման վրա էական ազդեցություն է թողնում շուկայում ֆինանսական միջոցների մատչելիությունը, արժեթղթերի շուկայի կայացման աստիճանը, ավելի էժան օտարերկրյա կապիտալի ներգրավվածությունը, ինչպես նաև մրցակցային դաշտն ու դրա հետ կապված ռիսկերը:

<< տնտեսությունն ունի ռիսկայնության բարձր աստիճան, որի պատճառով ֆինանսական հատվածը՝ ի դեմք բանկերի, տրամադրում է միջոցներ բարձր տոկոսով: Բացի տոկոսների բարձր մակարդակից, կազմակերպությունները չեն կարողանում նաև ներգրավել փոխառու միջոցներ ավելի երկարաժամկետ տնտեսական ներդրումներ կատարելու համար: Այս գործոնն էական ազդեցություն է թողնում կազմակերպությունների ֆինանսավորման կառուցվածքի վրա: Շատ կազմակերպություններում ներգրավված այս միջոցներն ունեն կարճաժամկետ բնույթ, որը, իր հերթին, բացասաբար է անդ-

բաղառնում կազմակերպությունների վճարունակության և երկարաժամկետ հրացվելիության վրա:

ՀՀ-ում արժեթղթերի շուկան շատ վատ է զարգացած: Դա վերաբերում է ինչպես պարտքային արժեթղթերի, այնպես էլ սեփական կապիտալի բաժնեմասնակցության գործիք հանդիսացող արժեթղթերի թողարկմանը, տեղաբաշխմանը: Այս առումով, միջոցների ներգրավումն անարդյունավետ, ծախսատար, երբեմն անհնաստ գործընթաց է:

Կազմակերպությունների մի մասը միջոցների ծնավորումն իրականացնում է սեփական աղբյուրների հաշվին: Կարևոր սեփական աղբյուր է կուտակված շահույթը, որը հիմնարար ցուցանիշ է կազմակերպության ֆինանսական վիճակը առողջ համարելու առումով: Սակայն այս ցուցանիշը ՀՀ կազմակերպությունների մի մասում կարող է ցածր լինել անգամ ֆինանսական և տնտեսական կայուն հոսքեր լինելու պարագայում, քանի որ սեփականատերերի մեծ մասը նախընտրում է տվյալ տարվա շահույթի իր մասը շահաբաժնների տեսքով դուրս հանել կազմակերպությունից:

ՀՀ կազմակերպությունները կարձագամկետ տնտեսական միջոցների ներգրավման պարագայում նույնպես ունեն որոշակի առանձնահատկություններ: Դրանք զգալի խնդիրներ են ունենում կարձագամկետ, փոքր ծախսեր պահանջող՝ ֆինանսավորման աղբյուր հանդիսացող կրեդիտորական պարտքեր ներգրավելիս: Շուկայի մասնակիցների մի ստվար հատված կամ չի աշխատում ապարիկ վաճառքների սկզբունքով՝ կազմակերպությունների անվճարունակության, սեփական երկարաժամկետ վճարունակության և այլ խնդիրների պատճառով, կամ էլ այդ ժամկետները շատ կարծ են լինում: Անգամ կան այնպիսիք, որոնք աշխատում են կանխավճարային վաճառքների սկզբունքով:

Կազմակերպությունների ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ անբողջական և մատչելի տեղեկատվական աղբյուր է ֆինանսական հաշվետվությունների փաթեթը: Դրանցից հատկապես անտք է առանձնացնել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, որը նախկինում կոչվում էր հաշվապահական հաշվեկշիռ: Հաշվետվության այս ձևում կազմակերպության պասիվներում, ըստ ՀՀՍՍ ստանդարտ 1-ի՝ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում», պահանջվում է ներկայացնել որոշակի նվազագույն տեղեկատվություն դրա կառուցվածքի մասին²: Ոլորտային առանձնահատկություններով պայմանավորված՝ կազմակերպությունների հաշվետվության այս ձևում հոդվածները կարող են ունենալ տարբեր դասակարգումներ: Վերլուծության ժամանակ ավելի ունիվերսալ ցուցանիշներ ունենալու համար առաջարկում ենք պասիվի կառուցվածքում առկա ցուցանիշները դիտարկել ավելի մեծ խմբերում՝ ագրեգացված տեսքով: Այսպես՝ սեփական կապիտալում առաջարկում ենք հետևյալ խոչոր խմբերի առանձնացումը՝

- բաժնետիրական կապիտալ (բաժնեհավաք կապիտալ, էմիսիոն եկամուտ),
- ներքին կուտակված միջոցներ (կուտակված շահույթ/վճառ, պահուստային կապիտալ),
- լրացուցիչ կապիտալ և սեփական կապիտալի այլ տարրեր (վերագնահատման պահուստներ, սեփական կապիտալի այլ տարրեր):

² Տես Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում», ՀՀ կառավարության N 770-Ն որոշում (18.07.2013):

Վերը թվարկված դասակարգումը ցույց է տալիս նաև սեփական կապիտալի առանձին տարրերի դասակարգումը՝ ըստ դրանց ձևավորման աղբյուրների և օգտագործման հնարավորությունների առանձնահատկության։ Առաջին խումբը կազմվում է արտաքին աղբյուրներից, իսկ երկրորդ և երրորդ խմբերը՝ կազմակերպության ներքին աղբյուրներից։ Առաջին և երկրորդ խմբերը կազմակերպությունուն իրական ֆինանսավորման միջոցներ են, իսկ երրորդը՝ հաշվապահական քաղաքականության կիրառման հետևանքով միջոցների գումարային աճ։

Երկարաժամկետ պարտավորություններն ավելի ագրեգացված ցուցանիշների տեսքով կարող ենք խմբավորել հետևյալ երեք խմբերում՝

- Երկարաժամկետ վարկեր, փոխառություններ (այստեղ կարելի է ներառել նաև պարտատոմսերի գծով պարտավորությունները և ֆինանսական վարձակալության գծով վճարման ենթակա գումարները),
- Երկարաժամկետ կրեդիտորական պարտքեր,
- այլ երկարաժամկետ պարտավորություններ։

Կարձաժամկետ պարտավորություններն ավելի ագրեգացված ցուցանիշների տեսքով կարող ենք միավորել հետևյալ երեք խմբերում՝

- Կարձաժամկետ վարկեր, փոխառություններ (այստեղ կարելի է ներառել նաև պարտատոմսերի գծով պարտավորությունները և ֆինանսական վարձակալության գծով վճարման ենթակա գումարների կարձաժամկետ մասը),
- առևտրային կրեդիտորական պարտքեր,
- այլ կարձաժամկետ պարտավորություններ։

Պասիվի կառուցվածքում եղած այս ցուցանիշների ագրեգացման հիմնական նպատակը տարրեր ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև տարրեր ոլորտներում գործող կազմակերպությունների համար համադրելի համեմատական բազայի ձևավորումն է։

Բացի պասիվի կառուցվածքում եղած ցուցանիշների ագրեգացումից, անհրաժեշտ ենք համարում նաև ֆինանսական արդյունքների համար նույնապես դիտարկել ունիվերսալ բացարձակ ցուցանիշներ։ Շահույթը հավելյալ արդյունքի այն մասն է, որ ստանում է կազմակերպությունը արտադրանքի իրացումից հետո՝ որպես ներդրված կապիտալի և կրած ռիսկերի դիմաց պարզեցում³։ Մեր կարծիքով՝ առավել կարևոր ֆինանսական արդյունքների ցուցանիշներ են համախառն շահույթը, գործառնական շահույթը, շահույթը մինչև հարկումը և շահույթը հարկումից հետո։ Այս ցուցանիշները (համախառն շահույթից մինչև գործառնական գործունեությունից շահույթը) կազմակերպությունների մի մասում միմյանցից տարբերվում են ըստ հոդվածների դասակարգման։ Այդ իսկ պատճառով վերլուծական հաշվարկների համար համախառն շահույթի ցուցանիշը չի օգտագործվել։

Վերլուծության հաջորդ փուլում կատարվել են կազմակերպության ֆինանսական կառուցվածքի և արդյունքների հարաբերական ցուցանիշների դասակարգում և որոշում։ Կազմակերպության պասիվի կառուցվածքի համար որպես որակական ցուցանիշներ են ընտրվել՝

- ֆինանսական ռիսկի կամ լծակի գործակիցը,
- ոչ ընթացիկ պարտավորությունների տեսակարար կշիռը պարտավորությունների մեջ,

³Տե՛ս Սավиցկայ Գ., Экономический анализ, 11-е изд., испр. и доп., М., “Новое знание”, 2005:

- ներքին աղբյուրներից ծևավորված միջոցների տեսակարար կշիռը սեփական կապիտալում:

Ֆինանսական արդյունքի հարաբերական ցուցանիշների վերլուծության ժամանակ ընտրվել են հետևյալ ցուցանիշները՝

- սեփական կապիտալի շահութաբերությունը (մինչև հարկումը զուտ շահույթի և սեփական կապիտալի միջին տարեկան արժեքի հարաբերությունը),
- ակտիվների շահութաբերությունը (գործառնական շահույթի և ակտիվների միջին տարեկան արժեքի հարաբերությունը),
- ֆինանսական ծախսեր/պարտավորություններ գործակիցը (ֆինանսական ծախսերի հարաբերությունը պարտավորությունների միջին տարեկան արժեքին):

Վերլուծությունը կատարվել է $\left\langle -20 \right\rangle$ կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշների հիման վրա: Կազմակերպությունները գործում են տնտեսության տարբեր ոլորտներում՝ հանքարդյունաբերություն, էներգետիկա, հեռահաղորդակցություն և այլն:

Աղյուսակ 1

Ցուցանիշների կոռելացման աստիճանը

	Ֆինանսական դրսի գործակիցը	ՀՆ ընթացիկ պարուս- պիության նշանակա- կարությունը սեփական մեջ	Մերժումային արժեքը մեջ մասնակիությունը	Ծանոթագրությունը մեջ մասնակիությունը	Արտկարությունը պարուս- պիության նշանակա- կարությունը	Արդիունակ շահույթը գործակիցը	Ֆինանսական դրսի գործակիցը նշանակա- կարությունը
Ֆինանսական ռիսկի գործակիցը	1	0.0	-0.1	-0.6	0.0	-0.2	
Ոչ ընթացիկ պար- ուսպիությունների տեսակարար կշիռը պարտավորություն- ների մեջ	0.0	1	-0.3	-0.2	-0.1	0.0	
Սեփական կապի- տալում ներքին աղբ- յուրներից ծևավոր- ված միջոցների տեսակարար կշիռը	-0.1	-0.3	1	0.4	0.1	-0.2	
Սեփական կապի- տալի շահութա- բերությունը	-0.6	-0.2	0.4	1	-0.2	-0.4	
Ակտիվների շահու- թաբերությունը	0.0	-0.1	0.1	-0.2	1	0.1	
Ֆինանսական ծախսեր/պարտա- վորությունների գործակիցը	-0.2	0.0	-0.2	-0.4	0.1	1	

Այս ցուցանիշների միջև առկա փոխկապածության միջոցով փորձ է արվել բացահայտելու կապիտալի ֆինանսավորման կառուցվածքի և ֆինանսական արդյունքների միջև առկա կախվածությունը: Առաջին փուլում իրականացվել է ցուցանիշների միջև առկա կոռելյացիոն կախվածության վերլուծություն: Ստացված արդյունքները ներկայացվել են աղյուսակի միջոցով.

Ինչպես տեսնում ենք, ֆինանսական արդյունքների և կապիտալի կառուցվածքի ցուցանիշների միջև առկա է շատ թույլ կախվածություն՝ բացառությամբ սեփական կապիտալի շահութաբերության և ֆինանսական ռիսկի միջև կապի, որը, սակայն, կրում է հակադարձ համեմատական բնույթ: Սա վկայում է այն մասին, որ փոխառու կապիտալի աճը, կազմակերպության սեփական կապիտալի շահութաբերության աճի փոխարեն, հանգեցնում է դրա նվազմանը: Այս ենթադրության համար ավելի հիմնավոր ապացույցներ ունենալու նպատակով կատարենք առկա ցուցանիշների վիճակագրական վերլուծություն: Կազմակերպությունները միավորել ենք ֆինանսական ռիսկի գործակի 0.5-ից բարձր և ցածր մակարդակ ունեցող խմբերում (աղյուսակ 2, 3):

Աղյուսակ 2

Ֆինանսական գործակիցների արժեքները 0.5-ից փոքր ֆինանսական ռիսկի գործակից ունեցող կազմակերպություններում

Կազմակերպություն	Կապակցական ռիսկի գործակիցը	Անդամական ռիսկի գործակիցը	Մասնակիության առավելացումը ունեցող ռիսկի գործակիցը	Անդամական ռիսկի գործակիցը	Անդամական ռիսկի գործակիցը	Անդամական ռիսկի գործակիցը	Կարգավորությունը /սկզբունքը տղի-ոտղարկեց
«Դ-Տելեկոմ» ՓԲԸ	0.10	0.04	0.99	0.28	0.53	0.00	
«ԱրՑԱԽ ՀԵԿ» ԲԲԸ	0.39	0.92	0.11	0.07	0.11	-0.09	
«ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ	0.33	0.61	0.96	0.06	0.01	0.00	
«Օրիֆլեմ Բռնմետիկս» ՍՊԸ	0.23	0.04	1.00	-0.02	-0.02	0.00	
«ԱրմենՏԵԼ» ՓԲԸ	0.11	0.07	0.86	0.13	0.03	0.00	
«Օրանժ Արմենիա» ՓԲԸ	0.36	0.10	-0.12	-0.11	-0.07	-0.03	
«Երևանի ոսկերչական գործարան» ԲԲԸ	0.12	0.39	-0.11	-0.04	-0.04	0.00	
«Մաքուր երկարի գործարան» ՓԲԸ	0.17	0.05	0.99	0.15	0.05	-0.13	
«Արփա-Սևան» ԲԲԸ	0.34	0.29	0.99	0.08	0.07	-0.08	

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, ֆինանսական ռիսկի 0.5-ից ցածր արժեք ունեցող կազմակերպությունների ֆինանսական արդյունքի ցուցանիշները կայուն են: Ֆինանսական ռիսկի բարձր գործակից ունեցող կազմակերպություններն ունեն շահութաբերության ցածր կամ բացասական գործակիցներ:

Նմանատիպ պատկեր կարող ենք տեսնել նաև ֆինանսական ռիսկի 0.5-ից բարձր մակարդակ ունեցող կազմակերպություններում: Եթե հաշվի չառնենք որոշ բացառություններ, ապա այստեղ ևս բարձր ֆինանսական ռիսկի գործակից ունեցող կազմակերպություններն ունեն ավելի ցածր շահութաբերության ցուցանիշներ:

Աղյուսակ 3

Ֆինանսական գործակիցների արժեքները 0.5-ից մեծ ֆինանսական ռիսկի գործակից ունեցող կազմակերպություններում

Կազմակերպություն	Ֆինանսական ռիսկի գործակիցը	ՀՀ ընդունված կազմակերպությունների կազմակերպությունների համար առաջարկված առավելագույն ռիսկը	Անդամակիցների առավելագույն ռիսկը	Մակարդակային ռիսկը	Աստիճանի շահութափ	Ֆինանսական ռիսկի մեջ կազմակերպությունների գործակիցը
«Երևան Զուր» ՓԲԸ	1.13	0.81	0.84	0.42	0.19	-0.03
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ	0.94	0.26	-0.37	0.16	0.15	-0.14
«Արմենիան բահը Փրոդրամ» ՓԲԸ	19.17	0.08	0.69	-1.34	0.00	-0.14
«Յուլքոմ» ՍՊԸ	6.63	0.68	1.00	0.28	0.10	-0.18
«Պարամաւոնք Գոլդ Մայնինգ» ՓԲԸ	2.85	0.98	-0.17	0.05	-0.01	-0.06
«Երևանի ուկերչական գործարան-1» «ԳՆՈՍՈՒՆ» ԲԲԸ	0.79	0.09	0.62	0.02	0.01	0.00
«ԶիէնՍի-ԱԼՖԱ» ՓԲԸ	-8.38	0.12	1.50	11.36	-0.08	-0.16
«Շեն Հոլիհնգ» ՓԲԸ	2.18	0.64	0.46	-0.14	0.05	-0.06
«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ	0.51	0.82	0.06	0.00	0.00	0.00
«Երևանի շամպայն գինիների գործարան» ԲԲԸ	1.36	0.75	0.47	0.03	0.01	-0.01
«Հրազդան ԶԷԿ» ԲԲԸ	0.63	0.00	0.07	0.36	0.19	0.00

Կազմակերպությունների ֆինանսական արդյունքի ցուցանիշների վրա կապիտալի կառուցվածքի ազդեցությունը պարզելու եղանակներից մեկը դրանց՝ ըստ ֆինանսական ռիսկի գործակից տարանջատված խմբերի համար հաշվարկված ֆինանսական գործակիցների միջին թվաբանական արժեքների համադրումն է, որը սույն աշխատանքում իրականացվել է Z-վիճակագրության հաշվարկման միջոցով: Առաջադրվել է Վարկած առ այն, որ առանձնացված երկու խմբերի համար հաշվարկված ֆինանսական գործակիցների միջին թվաբանական արժեքները մինյանցից չեն տարբերվում, այսինքն՝ կապիտալի կառուցվածքն էականորեն չի ազդում ֆինանսական արդյունքների վրա: Վերլուծության արդյունքները ներկայացված են աղյուսակում.

Աղյուսակ 4

Z-վիճակագրության վերլուծության արդյունքները

Ֆինանսական գործակիցներ	Խումբ 1 (ֆինանսական ռիսկի գործակիցը < 0.5)		Խումբ 1 (ֆինանսական ռիսկի գործակիցը > 0.5)		Z-վիճա- կագրու- թյուն	$P(Z \leq z)$ հավա- նակա- նություն
	Միջին թվարա- նական արժեք	Ներկայա- յին ռիս- պերսիա	Միջին թվարա- նական արժեք	Ներկայա- յին ռիս- պերսիա		
Ֆինանսական ծախս- ներ/պարտավորու- թյունների գործակիցը	-0.0371296	0.00216	-0.0703890	0.00448	1.31	0.10
Սեփական կապիտալի շահութաբերությունը	0.0661742	0.011935	1.0190228	10.905067	-0.96	0.17
Ակտիվների շահութաբերությունը	0.0725671	0.0290120	0.0553409	0.007165	0.28	0.39

Ըստ աղյուսակ 4-ի տվյալների՝ առաջ քաշված վարկածը 5% նշանակալիության մակարդակում մերժվում է, հետևաբար՝ ըստ խնդերի հաշվարկված ֆինանսական գործակիցների միջին թվարանական արժեքները մինյանցից էականորեն տարբերվում են:

Նշված կազմակերպությունների համար վերլուծության այս եղանակով բացահայտվում են կապիտալի կառուցվածքում ζ կազմակերպություններում առկա խնդիրները: Փոխառու կապիտալի աճը ոչ թե հանգեցնում է սեփական կապիտալի շահութաբերության աճի, այլ կա հակադարձ միտում: Սա կարող է պայմանավորված լինել ինչպես կազմակերպությունների կողմից միջոցների անարդյունավետ օգտագործմանք, այնպես էլ փոխառու կապիտալի ներգորավման ծախսատարությամբ:

АЙРАПЕТ АГАДЖАНЯН
Аспирант кафедры "Финансов" АГЭУ

Сравнительный анализ финансирования и финансовых результатов организаций РА. – Переход к рыночным отношениям и формирование частного сектора экономики в организациях создали серьезные проблемы с точки зрения образования финансовых средств и их эффективного использования. Для снижения рисков организаций, формирование оптимальной структуры капитала должно исходить из интересов собственников организаций и инвесторов. Это имеет особо важное значение в странах с переходной экономикой. Кроме этого, в этом деле важно учитывать особенности развития данной страны. Приобретение финансовых средств в Республике Армения связано с преодолением больших трудностей, требующих огромных затрат. Это отражается на финансовых результатах организаций.

Ключевые слова: инвестиционная деятельность, финансовые результаты, коэффициент финансового риска, структура пассива, статистический анализ- Z .

JEL: C44, E22, G32, O16

HAYRAPET AGADJANYAN
Post-graduate at the Chair of "Finance" at ASUE

Comparative Analysis of Financing and Financial Results of Organizations in the Republic of Armenia. – The transition to the market relations and formation of the private sector of economy have created serious problems for most organizations in terms of financial resources formation and their efficient usage. The formation of optimal structure of capital must come from the interests of its owners and investors, which will lead to the decrease of risks in the organizations. It is of special pivotal significance in the countries with transition economy. Besides, it is important to take into account the peculiarities of economic development in given countries as well. Gaining financial resources in the Republic of Armenia is connected with overcoming numerous difficulties, which demand a huge number of costs. It has an effect on the financial results of the organizations.

Key words: investing activities, financial results, coefficient of financial risk, structure of liabilities, statistical analysis- Z .

JEL: C44, E22, G32, O16